Տ. ԵՂԻԱ ԱԲԵՂԱՅ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ՝ ԽՕՍՈՒԱԾ ԵՐԵՒԱՆԻ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԱՌԱՔՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՄԱՏՈՒՑՈՒԱԾ ԱՆԴՐԱՆԻԿ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(30 օգոստոսի, կիրակի, 2009 թ.)

ՅԱՆՈՒՆ ՀՕՐ ԵՒ ՈՐԴՒՈՅ ԵՒ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ. ԱՄԷՆ:

«Ասպուածածին սիւն լուսոյ, ամպ հովանաւոր
եւ բնակարան Բանին, որ բանիւ հովուէր զԻսրայէլ.
բարեխօսեա նմա վասն անձանց մերոց»
(Շարակնոց)

Սիրելի՛ հաւատաւոր եւ բարեպաշտ ժողովուրդ,

Առաքելական մեր Մայր Եկեղեցու Տօնացոյցի համաձայն՝ այսօր Ասպուածամօր գօտու գիւտի տօնն է: Ինչպէս գիտէք, Հայոց Եկեղեցին Ս. Կոյս Մարիամին նուիրուած եօթ տօն ունի, որոնք են՝ Ս. Ասպուածածնի յղութիւնը Աննայից, Տիրամօր ծնունդը, Տաճարին ընծայումը, Աւետումը, Վերափոխումը եւ նրա Տուփի ու Գօտու գիւտը: Վերջինիս հետ կապուած մեզ են հասել պատմական չափազանց սուղ տեղեկութիւններ, որոնք ի մի բերելով՝ ունենում ենք տօնի ամփոփ պատկերը:

Արկադիոս կայսեր գահակալութեան շրջանում՝ 395-408 թթ., Երուսաղէմում գտնում է Ասպուածամօր գօտին, որը մեծ յարգանքով եւ յատուկ ուշադրութեամբ տարում է Կոստանդնուպոլիս: Տեղի հաւատացեալները, իմանալով այս դէպքի մասին, երկիւղալից սրտով ընդառաջ են գնում եւ խորին ակնածանքով այն դնում եկեղեցում: Այդ յիշարժան իրադարձութեան առիթով յետագայում յոյները Ս. Կոյսի անունով կառուցում են մի նոր եկեղեցի եւ գօտին զետեղում այնտեղ՝ ի մխիթարութիւն քրիստոնեայ հաւատացեալների:

Այսօրուայ տօնի խորհրդով կը ցանկանայի անդրադառնալ նաեւ Ս. Մարիամ Ասպուածածնի կեանքի կարեւորագոյն մի քանի դրուագներին՝ ներկայացնելով նրա կերպարը՝ իբրեւ ճշմարիտ օրինակ մայրութեան եւ կուսութեան: Տիրամայրն աւետարանական մի քանի պատմութիւններում է միայն յիշատակւում: Նրա կեանքի նկարագրութիւնը մեզ հիմնականում հասել է Եկեղեցու սրբազան աւանդութեամբ:

Ս. Մարիամը Յովակիմի եւ Աննայի դուստրն էր՝ թագաւորական ցեղից, հօր կողմից՝ Դաւթի ազգից, իսկ մօր կողմից՝ Ղեւիի քահանայական տնից: Նա ամլութեան ծնունդ էր եւ իր ծնողներին տրուած աւետիսի զաւակը: Նրանք երեք տարեկան հասակում Ս. Կոյսին ընծայում են Ասպուծոյ տաճարին, ուր նա անբիծ աղաւնու պէս մնում է մինչեւ տասնչորս տարեկանը: Այդժամ քահանաները նրան յանձնում են պարկեշտ ու բարեպաշտ Յովսէփի խնամքին: Երեք ամիս անց Նազարէթում՝ Յովսէփի տանը, Գաբրիէլ հրեշտակապետը ողջոյն է տալիս Տիրուհուն, ով տասնհինգ տարեկանում Ս. Հոգով ծնում է աշխարհի Փրկչին՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսին, եւ երեսուներեք տարի մնում իր Որդու հետ: Դեռեւս Յովսէփի կենդանութեան օրօք նրա իսկ յանձնարարութեամբ Սրբուհուն սպասաւորում էր Յակոբոս

Արդարը, որ նաեւ Յովսէփի համար էր ծառայաբար հոգ տանում: Սակայն Տիրոջ խաչելութեան ժամին Աստուածամօր խնամքը յանձնում է Քրիստոսի սիրելի աշակերտ Յովհաննէսին: Այդ ժամանակ Ս. Մարիամը քառասունութ տարեկան էր, Քրիստոսի համբարձումից յետոյ նա ապրեց եւս տասներկու տարի:

Երանելի Կոյսն այդ օրերին բնակւում էր Երուսաղէմում՝ իր ծնողների տանը, ուր նրան ծառայում էր Ս. Յովհաննէս Առաքեալը: Տիրուհին լուռ նստում էր տանը՝ անդադար աղօթելով ու վարժուելով զանազան ճգնութիւնների մէջ: Նա աչքի էր ընկնում սքանչելի վարքով՝ իր հոգու եւ մարմնի անարատութեամբ գերազանցելով բոլոր ժամանակների սուրբերին: Աստուածածինն իր հրեշտակային տեսքով, անխախտելի կուսութեամբ եւ դէմքի անբացատրելի գեղեցկութեամբ յայտնապէս ճանաչւում էր ամէնքի կողմից՝ որպէս ճշմարիտ մայր Էմմանուէլի: Նրա ապրած ամբողջ կեանքը տեւում է վաթսուն տարի: Այստեղից հաւատացեալների մէջ սահմանուած է, որ տղամարդն ամէն օր երեսունվեց երկրպագութիւն անի ծնրադրութեամբ՝ ի փառս Քրիստոսի (երեսուներեքը՝ ըստ Փրկչի երկրային կեանքի տեւողութեան, եւ երեքը՝ ի փառս Ս. Երրորդութեան), իսկ կինը՝ վաթսուն՝ ի պատիւ եւ ի բարեխօսութիւն Ս. Մարիամի, որ վաթսուն տարի ապրելով աշխարհում՝ հոգով եւ մարմնով վերափոխուեց դէպի գերաշխարհայինների կայանը՝ իր միածին Որդու եւ մեր Աստուծոյ Արքայութիւնը:

Արդարեւ, Աստուածամայրը քրիստոնեաներիս համար հարիւրամեակներ շարունակ եղել է եւ է գերագոյն պատկառանքի արժանի բացառիկ մի անձ: Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին եւս հնուց ի վեր ամէնօրեայ իր աստուածպաշտական արարողութիւններում մեծ տեղ է յատկացրել Տիրամօրը: Բաւական է նշել, որ հոգեպարար մեր շարականների մի զգալի մասը նուիրուած է Ս. Աստուածածնին: Նրա անունով են նաեւ կոչւում հայկական վանքերի ու եկեղեցիների աւագ խորանները, ուր ամէն անգամ հայեացք ուղղելիս մեր առջեւ պատկերանում է Աստուածամայրը՝ մանուկ Յիսուսը գրկին:

Ի սկզբանէ Աստուած Մարիամի մէջ տեսել էր սրբակենցաղ ապրումների մի լուսէ տաճար, ուր եւ շուրջ ինն ամիս հաճեց բնակուել Իր թանկագին Որդին: Ս. Կոյսն իրապէս «եղաւ եդեմական երկրային դրախտ, որտեղից բխեց կեանքի Աղբիւրը՝ Յիսուս Քրիստոս. եղաւ նոյեան տապան, որը պատճառ դարձաւ ողջ տիեզերքի փրկութեան համար. եղաւ անկէզ մորենի, քանզի Ս. Հոգու կրակը հպուեց նրա որովայնին եւ չբոցակիզեց. եղաւ ուխտի տապանակ, որ կրեց անսահման Բանն Աստծուն՝ բոլոր ժողովուրդներին առաջնորդելով դէպի «վերին Երուսաղէմ». եղաւ ոսկէ սափոր, որը կրեց կեանքի Մանանան՝ Հօր միածին Որդուն. եղաւ ծաղկեալ գաւազան, որը տրտմածներիս ընծայեց ուրախութեան Ողկոյզը՝ Քրիստոսին. եղաւ գերարփի արեւելք, որտեղից ծագեց արդարութեան Արեգակը՝ հալածելու մեղքերի խաւարը...» (Ս. Գրիգոր Տաթեւացի):

Երկրագնդի բոլոր կանանց միջից Ս. Մարիամն ընտրուեց՝ որպէս մաքուր անօթ Աստուածորդու մարդեղութեան համար: Իր կուսական անբասիր կեանքը, առաքինի վարքն ու աստուածահաճոյ ընթացքը եղան այդ ընտրութեան գրաւականը: Եւ առաջին պատգամը, որ այսօր Ս. Կոյսից ճառագում է ամէնքիս հոգիներում, մեր կեանքն ամենայն սրբութեամբ, աստուածապարգեւ առաքինութիւններով եւ քրիստոնէական առողջ սկզբունքներով ապրելու կոչն է՝ արժանանալու համար երկնաւոր Հօր որդեգրութեանը, Աստուածորդու տեսութեանը եւ Ս. Հոգու բնակութեանը:

Ս. Մարիամ Աստուածածինը հայերիս ոգեկանութեան մէջ մասնաւորաբար ընկալուած է որպէս փիպար մայր, որը ոչ միայն լոյս աշխարհ է բերում իր զաւակին, այլ նաեւ իր կեանքն է տալիս նրա համար: Յիշենք, թէ ինչպէս Տիրամայրը, ամէն ինչ մոռացած, փնտռում էր բազմութեան մէջ կորած պատանի Յիսուսին եւ չհանգստացաւ, մինչեւ որ նրան չգտաւ տաճարում: Եւ ինչքա՜ն էր Սրբուհին տառապում, ողբում ու տագնապում, երբ տեսնում էր իր սիրելի Որդուն՝ հրէաներից հալածուած եւ անօրէնների կողմից խաչուած... «Հայ ազգը փիպար մօր կերպարն այսպիսի վեհ պատկերացմամբ ըմբռնելով է, որ հայերէնի ամենագեղեցիկ եւ ազնուագոյն բառերից մէկը՝ «մայր» բառը, ընդելուզել է իր նուիրական սրբութիւններին, ինչպէս Մայր Եկեղեցի, Մայրենի Լեզու, Մայր Հայրենիք, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին» (Գարեգին Ա. Սարգիսեան):

Սիրելինե՛ր, Ս. Կոյս Մարիամը, մայր լինելով հանդերձ, միեւնոյն ժամանակ մնաց յաւերժական Կոյս: Թերեւս այս երկու հասկացութիւնները՝ մայրութիւն եւ կուսութիւն, անհամապատեղելի են մարդկային տրամաբանութեան համար, սակայն ինչ որ անկարելի է մարդու համար, միանգամայն հնարաւոր է ամենակարող Աստուծոյ համար: Աստուածածնի անձով պատուեց թէ՛ մայրութիւնը եւ թէ՛ կուսութիւնը, քանի որ մեզնից իւրաքանչիւրը, ինչպէս ասում է սրբազան Պօղոս Առաքեալը, իր շնորհն ունի Աստծուց՝ մէկն այսպէս, իսկ միւսն՝ այնպէս... Սակայն Աստուած պիտի դատի շներին ու պոռնիկներին:

Սիրելի՛ հաւատացեալներ, եկէ՛ք, ուրեմն, միասնաբար հայցենք ամենասրբուհի Կոյս Աստուածածնի հզօր բարեխօսութիւնը՝ հայ ընտանիքների ամրութեան, երկնային Տիրոջը անձանձիր ծառայութեան եւ մեր մեղքերի թողութեան համար:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ եւ Փրկչին
Յիսուսի Քրիստոսի, եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ. ամէն: